ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

2021թ. Օգոստոսի 26-ին տեղի ունեցավ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օպերատորություն, գեղարվեստական լուսանկարչություն և սոցիալ-մշակույթային գործունեության ամբիոնի հերթական նիստը:

Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Օրակարգ

2021-2022 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատում (օգոստոս) (Զեկ. Երզինկյան)

2021-2022 ուս. տարվա ընդունելության քննությունների արդյունքների ամփոփում (օգոստոս Զեկ.Երզինկյան)

2021-2022 ուս. տարվա դասաբաշխման ծանոթացում (օգոստոս Զեկ.Երզինկյան)

2021-2022 ուս. տարվա ինտերակտիվ ուսուցման (Classroom) քննարկում (օգոստոս Զեկ մասնագետ)

Տեխնիկական վերազինման հարցերի քննարկում և տեխնիկական միջոցների օգտագործումը ամբիոնում (օգոստոս)

Ընթացիկ հարցեր

1 .Լսեցին- Ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ռ.Յ.Երզինկյանը ներկայացրեց 2021-2022 ուս. տարվա աշխատանքային պլանը:Այս տարի աշխատանքային պլանում տեղ են գտել այն կարևոր հարցերը (ամենամսյա դասալսումների,սոցիալական ծրագրերի,ուսանողների և դասախոսների հաճախման, քննական տոմսերի

հաստատման, սեսիոն քննությունների նախապատրաստման և ամփոփման, պրակտիկաների կազմակերպման, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման և հաստատման և վերջապես այն բոլոր հարցերը. որոնք առնչվում են ամբիոնի գործունեության հետ):

Արտահայտվեցին- Ամբիոնի դասախոսներ՝ Ա. Չիլինգարյանը, Ա.Հ. Խաչատչյանը, Ս. Ա. Տրոյանը:

Որոշեցին- Հաստատել 2021-2022 ուս.տարվա աշխատանքային պլանը:

2. Լսեցին- Ամբիոնի վարիչ Ռ.Երզինկյանը դասախոսներին ծանոթացրեց 2021-2022 ուս.տարվա ընդունելության մասին: Գեղարվեստական լուսանկարչություն բաժնում ընդունվել են թվով 7 հոգի, օպերատորություն բաժնում թվով 15 հոգի:

Արտահայտվեցին-Ամբիոնի դասախոսներ Ն. Սարգսյանը, Լ.Գալստյանը, Հ. Մանդունյանը, Ի. Շահբազյանը:

Որոշեցին - 2021-2022 ուս. տարվա ընդունելությունը համարել բավարար:

3. Լսեցին - Ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը դասախոսական կազմին ներկայացրեց 2021-2022 ուս.տարվա դասաբաշխման հետ: Ամբիոնի ծանրաբեռնվածությունը 14868 ժամ, ամբիոնը ունի 18,5 հաստիք :

Արտահայտվեցին- ամբիոնի դասախոսներ , Ա. Հարությունան,Ա. Արիստակեսյան, Կ.Բորյանը:

Որոշեցին-Բոլորը ստացան իրենց դասաբաշխումները:

4. Լսեցին- Ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը ամբիոնի նիստում անդրադարձավ (classroom) էլեկտրոնային հարթակին, որը 2021-2022 ուս.տարում ավելացել է

դասախոսների անհատական ծանրաբեռնվածության մեջ: Պարտադիր բոլորը իրենց հատկացված էլեկտրոնային հարթակի ժամերով շաբաթը 1 անգամ պետք է մուտք ունենան էլեկտրոնային հարթակ:

Արտահայտվեցին-Ամբիոնի դասախոսներ Հ. Մանդունյանը, Ա.Խաչատրյանը, Կ. Մուրադյան:

Որոշեցին-Classroom-ին հատկացրած ժամերը էլեկտրոնային հարթակում երևան վիդեո հոլովակի, դասախոսության տեսքով շաբաթը 1 անգամ:

5.Լսեցին-Ամբիոնի վարիչ պրոֆեսոր Յ.Երզինկյանը խոսեց ամբիոնի տեխնիկական միջոցների վերազինման վերաբերյալ: Նա դիմեց դասախոսների թե ինչ սարքավորումներ են անհրաժեշտ, դասերը պատշաճ ձևով դասավանդելու համար:

Արտահայտեցին-Բոլոր դասախոսները համաձայն էին ամբիոնը վերազինել նոր սարքավորումներով:

6. Ընթացիկ հարցերը

1.Լսեցին- Ամբիոնի մասնագետ Գ. Մարտիրոսյանը ներկայացրեց 2021-2022ուս. տարվա ծրագրերում կատարել թեմատիկ տրոհումների փոփոխությունները էլեկտրոնային հարթակում:

Արտահայտվեցին- Դասախոսները՝ Ն. Գայիջյանը, Վ. Պետրոսյանը:

Որոշեցին-Նոր ուսումնական տարում կատարել նոր թեմատիկ տրոհումներ:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ

ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

2021թ. սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

Դասալսումների գրաֆիկի հաստատում և կազմակերպում:

Քննարկել և հաստատել առաջին կիսամյակի 1-ին և 2-րդ միջանկյալների և ամփոփիչ ստուգումների հարցաշարերը:

Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը զեկուցեց 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման և կազմակերպման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Օպերատորություն, գեղարվեստական լուսանկարչություն և ՍՄԳ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը: Ծանոթացան 1-ին կիսամյակի աշխատանքային պլանին, դասալսումների գրաֆիկին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Դասալսումները կազմակերպել նաև բացօթյա նկարահանումների, բաց դասերի ժամանակ ամբիոնի վարիչի հսկողությամբ:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը ներկայացրեց 2021-2022 ուս.տարվա 1-ին կիսամյակի 1-ին և 2-րդ միջանկյալների և ամփոփիչ ստուգումների հարցաշարերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Դասախոսներ Ս. Սևադան , Կ. Բորյանը, Ն. Գայիջյանը, Վ. Պետրոսանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Համաձայն ուսումնական պլանի կազմակերպել 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի 1-ին և 2-րդ միջանկյալները՝ համապատասխանեցված առարկայի թեմատիկ տրոհումների, ինչպես նաև միջանկյալների հարցաշարերը տեղադրել Classroom հարթակում:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Սեպտեմբերի 13-ին Նարեկացի արվեստի կենտրոնում Ա.Ա.Խաչատրյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Գեղարվեստական լուսանկարչություն» խորագրով ցուցահանդես ուսանողների և շրջանավարտների մասնակցությամբ: Ցուցահանդեսը տեղադրված է նաև բուհի օնլայն հարթակում:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

2021թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

Մագիստոսական թեզերի բազայի հաստատում, դիպլոմային աշխատանքների մագիստոսական թեզերի քննարկում:

Ուսումնական պրակտիկայի կազմակերպումը օպերատորության և գեղարվեստական լուսանկարչության բաժիններում:

Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը զեկուցեց 2021-2022 ուս. տարվա մագիստոսական թեզերի հաստատման և կազմակերպման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մագիսոսական թեզերի ղեկավարներ՝ Սահակ Անդրեյի Տրոյանը և պրոֆեսոր Արմեն Համբիկի Խաչատրյանը, ներկայացրեցին մագիստրոսական թեզերի բազաներից արդեն ընտրված, հաստատված թեմաները: Քննարկվեց նաև մագրստրոս 2-րդ կուրսերի և առկա 4-րդ կուրսերի դիպլոմային աշխատանքների թեմաները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Աշխատանքների նկարահանման ողջ ընթացքում հետևել ուսանողների գործունեությանը, հետևողական լինել աշխատանքների ընթացքին:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը ներկայացրեց, որ գեղարվեստական լուսանկարչության բաժնի 4-րդ կուրսի ուսանողները իրենց ուսումնական պրակտիկան կանցկացնեն Ս. Փարաջանովի անվան տուն թանգարանում դասախոս Իռեն Շահբազյանի ղեկավարությամբ, իսկ օպերատորության բաժնի 4-րդ կուրսի ուսանողները իրենց ուսումնական պրակտիկան կանցկացնեն Երկիր Մեդիա հեռուստաընկերությում դասախոս Գրիգոր Ստեփանյանի ղեկավարությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Դասախոսներ Իռեն Շահբազյանը և Գրիգոր Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպել սահմանված կարգով և արդյունավետ:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ- Հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 15-ը դասերը անցկացնել առցանց:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ . ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

2021թ. նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Մագիստոսական թեզերի և դիպլոմային աշխատանքների հաստատում:

2. Ուսումնական և մասնագիտական պրակտիկաների անցկացման հաշվետվություն, պրակտիկայի գնահատում և ամփոփում ղեկավարների կողմից

3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը ներկայացրեց 2021-2022 ուս. տարվա մագիստոսական թեզերի և դիպլոմային աշխատանքների վերնագրերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դասախոսներ Կարապետ Բորյանը, Հակոբ Մանդունյանը, Ա. Ա. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մագիստրոսական թեզերի և դիպլոմային աշխատանքների հաստատված թեմաները տալ ուսանողներին ըստ իրենց նախասիրությունների:

2. ԼՍԵՑԻՆ- Գեղարվեստական լուսանկարչության բաժնի 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ղեկավար դասախոս Իռեն Շահբազյանը և օպերատորության բաժնի 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ղեկավար դասախոս Գրիգոր Ստեփանյանը ներկայացրեցին ուսումնական և մասնագիտական պրակտիկաների անցկացման հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Դասախոսներ Իռեն Շահբազյանը և Գրիգոր Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ուսանողների ուսումնական պրակտիկան համարել բավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1.ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը հաղորդեց, որ դասերը իրենց բնականոն հունով կվերսկսվեն նոյեմբերի 16-ից, ամբիոնի նիստում քննարկվեց նաև դասալսումների արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսներ Հ. Մանդունյանը, Ս. Տրոյանը, Լ. Գալստյանը:

2.ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը ներկայացրեց ամբիոնի դասախոս կիոռեժիսոր Ա. Չիլինգարյանի <<Լույսի կաթիլներ>> լիամետրաժ գեղարվեստական կինոնկարը նոյեմբերին արժանացել է լավագույն դրամա մրցանակին Ճապոնիայում անցկացվող Տոկիո Ֆիլմ Ավարդս փառատոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ռ. Յու. Երզինկյանը, դասախոսներ Կ. Բորյանը. Ա. Արիստակեսյանը, Ա. Հարությունյանը, Ա. Հ. Խաչատրյանը:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ

ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ . ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

2022թ. հունվարի 7-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ միջանկյալի առաջադրանքները տեղադրել classroom հարթակում:

2. 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացիկ քննությունների տոմսերի նախապատրաստում:

3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը նիստի ժամանակ հանձնարարեց դասախոսներին, որպեսզի 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի 2-րդ միջանկյալի թեմաներն ու առաջադրանքները տեղադրեն classroom հարթակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դասախոսներ Արայիկ Հարությունյանը, Արմեն Հ. Խաչատրյանը, Արուսյակ Արիստակեսյանը և Ն. Գայիջյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարականներն ու առաջադրանքները կատարել ընդունված կարգով:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ,պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը դասախոսներին հանձնարարեց նախապատրաստել 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացիկ քննությունների տոմսերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Դասախոսներ Ա. Չիլինգարյանը, Հ. Մանդունյանը և Կ. Բորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Այն առարկաները որոնք քննական են նախորոք հաստատված տոմսերը ներկայացնել ամբիոն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

3. ԼՍԵՑԻՆ- Ամփոփեցին 1-ին կիսամյակի դասալսումները: Դասալսումներ են կազմկերպվել բացօթյա վայրերում: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են նաև վարպետության դասեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դասախոսներ Ի Շահբազյանը, Շ. Վարդանյանը , Մ. Վիրաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումները և վարպետության դասերը համարել բավարար:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

2022թ. հունվարի 25-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:

2. Քննարկել և հաստատել 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի 1-2 միջանկյալների և ամփոփիչ ստուգման հարցաշարերը:

3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը նիստի ժամանակ ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դասախոսներ Արայիկ Հարությունյանը, Արմեն Հ. Խաչատրյանը, Արուսյակ Արիստակեսյանը և Ն. Գայիջյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննաշրջանն ամփոփեցին և համարեցին բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ,պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը դասախոսներին հանձնարարեց ամբիոն ներկայացել 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի 1-2 մջանկյալների և ամփոփիչ ստուգման հարցաշարերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Դասախոսներ Ս. Տրոյանը, Ա. Հ. Խաչատրյանը և Լ. Գալստյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի 1-2 միջանկյալների և ամփոփիչ ստուգման հարցաշարերը տեղադրել classroom էլեկտրոնային հարթակում :

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

3. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների և փետրվար ամսվա անցկացվող միջոցառումների ցանկը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դասախոսներ Հ. Մանդունյանը, Ա. Հարությյանը և Ն.Գայիջյանը::

ՈՐՈՇԵՑԻՆ- 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասալսումները կազմակերպել նաև բացօթյա:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

2022թ. փետրվարի 7-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1.Բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի պետական քննությունների հարցաշարերի քննարկում և հաստատում:

2.2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստում և 1-ին կիսամյակի մշտադիտարկում:

3. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պրակտիկայի կազմակերպում բակալավր 3-րդ և հեռակա 4-րդ կուրսերի օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության բաժիններում :

4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը նիստի ժամանակ ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստարատուրայի ավարտական կուրսերի պետական քննությունների հարցաշարերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դասախոսներ Կ. Մուրադյանը, Ա. Չիլինգարյանը, Ա. Արիստակեսյանը և Մ. Վիրաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Վերանայվեցին 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստարատուրայի ավարտական կուրսերի պետական քննությունների հարցաշարերը թարմացվեցին և ներկայացվեցին հաստատման :

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի մասնագետը դասախոսներին տեղեկացրեց իրենց 2-րդ կիսամյակի ծանրաբեռնվածությունը ըստ իրենց դասաժամերի:

Ներկայացվեց մշտադիտարկման արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի որակի պատասխանատու դասախոս Կ. Մուրադյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկեցին classroom մշտադիտարկման արդյունքները, արվեցին դիտողություններ , եղան որոշակի շտկումներ:

3. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ,պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը ներկայացրեց պրակտիկաների անցկացման վայրերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրակտիկայի ղեկավարներ՝ օպերատորության բաժնում Կ. Մուրադյանը, գեղարվեստական լուսանկարչության բաժնում Լ. Գալստյանը և Ն. Գայիջյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պրակտիկան անցկացնել <<Օրդեր ֆիլմ փրոդաքշն>> ՍՊԸ-ում և <<Սերգեյ Փարաջանովի անվան թագարան>> ՊՈԱԿ-ում:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1. ԼՍԵՑԻՆ - Փետրվարի 4-ին Երևանի N 135 միջն. դպրոցում Ա. Ա. Խաչատրյանի կողմից կազմակերպվեց գեղարվեստական լուսանկարչության ցուցահանդես <<100 արևներից էլ պայծառ>> խորագրով: Ցուցահանդեսին մասնակցել են ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի ուսանողները և շրջանավարտները:

Ցուցահանդեսի շրջանակում ստորագրվեց համագործակցության հուշագիր ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի և Գագիկ Ստեփանյանի անվան N135 հիմնական դպրոցի հետ: Ցուցահանդեսին ներկա էին ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը ուսանողներ և Չինաստանի արտակարգ լիազոր դեսպանը: Նա ողջունեց Օպերատորության,գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի կողմից կազմակերպված ցուցահանդեսը:

Փետրվարի 21-ին անցկացվեց վարպետաց դաս Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան N135 հիմնական դպրոցում <<Լուսանկարչության դասավանդման հիմունքները դպրոցում >> թեմայով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը Չինաստանի արտակարգ լիազոր դեսպանը և ցուցահանդեսի կազմակերպիչ գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի ասիստենտ Ա.Ա. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Նմանատիպ միջոցառումներ և ցուցահանդեսներ կազմակերպել պարբերաբար:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի դասախոս Նելլի Ռաֆիկի Սարգսյանին համարել ծննդաբերության համար տրամադրվող արձակուրդում 2022 թվականի փետրվարի 4-ից մինչև 2022 թվականի ապրիլի 14- ներառյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Նելլի Ռաֆիկի Սարգսյանի ծանրաբեռնվածությունը բաշխել նույն ամբիոնի դասախոս Կարապետ Արմենակի Բորյանի դասաբաշխման մեջ:

3. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը ներկայացրեց ամբիոնի

դասախոս, կինոռեժիսոր Ա. Չիլինգարյանի <<Լույսի կաթիլներ>> ֆիլմը ընդգրկվել է Մալտա Ֆիլմ ֆեստիվալի մրցութային ծրագրում :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը, դասախոսներ Շ. Վարդանյանը, Սամվել- Սևադա Գրիգորյանը, Ն. Գայիջյանը:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

2022թ. մարտի 17-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1.Պրակտիկայի ամփոփում, պրակտիկայի ղեկավարների զեկույց հաշվետվություն:

2.Դասալսումների կազմակերպում և քննարկում:

3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ - Պրակտիկայի ղեկավարներ օպերատորության բաժնի առկա 3-րդ, հեռակա 4-րդ կուրսերում Կարինե Մուրադյանը, գեղարվեստական լուսանկարչության բաժնի առկա 3-րդ և հեռակա բաժնում Լիլիան Գալստյանը և Նարինե Գայիջյանը ներկայացրեցին պրակտիկայի հաշվետվությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը և պրակտիկայի ղեկավարները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պրակտիկայի զեկույց հաշվետվությունը համարել բավարար և գնահատել ուսանողներին ըստ իրենց հաճախումների և ցուցաբերած ակտիվության:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ռ. Յու. Երզինկյանը քննարկեց մարտ ամսվա դասալսումների արդյունքները և ներկայացրեց ապրիլ ամսվա դասալսումների գրաֆիկը:

Մարտ ամսին դասալսումներ անցկացվեցին գեղարվեստական լուսանկարչության բաժնի 1-ին, 4-րդ և օպերատորության բաժնի 4-րդ կուրսերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի որակի պատասխանատու դասախոս Կարինե Մուրադյանը, Սահակ Տրոյանը, Արայիկ Հարությունյանը : Դասախոսները անդրադարձան ինչպես որակի այնպես էլ ուսանողների հաճախումներին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Դասալսումներ անցկացնել ոչ միայն լսարաններում այլ նաև բացօթյա վայրերում: Եվ հետևողական լինել ուսանողների հաճախումներին:

Ապրիլ ամսվա դասալսումների գրաֆիկի մեջ ընդգրկվել են դասախոսներ Շավարշ Վարդանյանը, Սահակ Տրոյանը և Արաիկ Հարությունյանը:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

3. ԼՍԵՑԻՆ- Մարտի 17-ին դասախոս Արմեն Խաչատրյանի կողմից անցկացվեց վարպետաց դաս Խաչատուր Աբովյանի անվան N2 միջնակարգ դպրոցի բարձր դասարանի աշակերտների հետ <<Արդի լուսանկարչություն >> թեմայով:

2022թ. մարտ ամսին Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան N135 հիմնական դպրոցում լուսանկարների նկարահանում չինարենի դասագրքի համար:

Մարտի 27-ին Altff ֆիլմ ֆեստիվալում դասախոս Արման Չիլինգարյանի <<Լույսի կաթիլներ>> լիամետրաժ գեղարվեստական կինոնկարը արժանացավ Տորոնտոյի ալտերնատիվ ֆիլմ ֆեստիվալ փառատոնի լավագույն դրամա մրցանակի: Բացի այդ ֆիլմը նաև փառատոնում ներկայացված էր ևս 2 անվանակարգերում լավագույն դերասան և լավագույն դերասանուհի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դասախոսներ Արմեն Խաչատրյանը Սամվել- Սևադա Գրիգորյանը և Սահակ Տրոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Տարբեր դպրոցներում նմանատիպ միջոցառումներ հաճախակի կազմակերպել :

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

2022թ. ապրիլի 8-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի և ավարտական կուրսերի դիպլոմային աշխատանքների նախապաշտպանություն:
2. Ապրիլ ամսվա դասալսումների քննարկումներ:
3. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը հանձնարարեց ավարտական կուրսերի ղեկավարներ Ա.Հ. Խաչատրյանին և Ա.Ա. Խաչատրյանին կազմակերպել մագիստրոսական և ավարտական կուրսերի դիպլոմային աշխատանքների նախապաշտպանությունը, որը տեղի կունենա ապրիլի 18-22- ը ընկած ժամանակահատվածում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ամբիոնի դասախոսներ Կարապետ Բորյանը, Արմեն Համբիկի Խաչատրյանը,Արմեն Ալբերտի Խաչատրյանը և Հակոբ Մանդունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ավարտական կուրսերի ղեկավարները մինչև վերջնական նախապաշտպանության ժամկետը ամբիոնում կազմակերպել ավարտական աշխատանքների վերանայում, ամբիոնի վարիչի գլխավորությամբ:

2. ԼՍԵՑԻՆ- Ապրիլի 4-ին անցկացվեց դասալսում օպերատորության բակալավր 3-րդ կուրսում: Դասալսվեց դասախոս Շ. Վարդանյանի (Կոմբինացված նկարահանումներ) առարկան: Դասալսմանը ներկա էին ամբիոնի վարիչ Ռ.Երզինկյանը և ամբիոնի դասախոս Ա. Հ. Խաչատրյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը անդրադարձավ ուսանողների հաճախումներին, որը ինչ որ չափով անդրադառնում է նրանց առաջադիմության վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդհանուր առմամբ դասը գնահատել բավարար:

2.1.ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը ներկայացրեց ապրիլ ամսվա 2-րդ կեսի դասալսումների ցանկը՝ Գեղարվեստական լուսանկարչության 3-րդ կուրսում կդասալսվի 15.04.2022թ Գեղարվեստական լուսանկարչության վարպետություն առարկան դասախոս Սահակ Տրոյանի ղեկավարությամբ և Օպերատորության 2-րդ կուրսում 26.04.2022թ Ֆոտոլուսավորություն առարկան դասախոս Արահիկ Հարությունյանի ղեկավարությամբ:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

3.ԼՍԵՑԻՆ- 2022թ ապրիլի 2-ին Նկարիչների միությունում տեղի ունեցավ ամբիոնի դասախոս Սամվել-Սևադա Գրիգորյանի անհատական ցուցահանդեսը:Ապրիլի 6-ին

Նկարիչների միությունում կազմակերպվեց բաց դաս որին մասնակցում էին ուսանողներ, մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի և մշակույթի քոլեջի սաները :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի և մշակույթի քոլեջի մասնակիցները մեծ բավականություն ստացան, ողջունեցին միջոցառումը և մեծ տպավորություններով հեռացան:

4.ԼՍԵՑԻՆ- Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի ԱԲ ուսուցման 2020-2021 տարվա շրջանավարտի՝ որակավորման քննության ավարտական աշխատանքի

պաշտպանության՝ արդեն 2021-2022 ուս տարում մասնակցելու թույլտվության համար դիմած ուսանող Գավրուշ Յակովի Գարախանյանի ավարտական աշխատանքը ղեկավարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանը,պրոֆեսոր Ա. Հ. Խաչատրյանը և դասախոս Հ. Մանդունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնը պատրաստակամ է ղեկավարելու առկա բակալավր ուսուցման համակարգի ուսանող Գավրուշ Յակովի Գարախանյանի ավարտական աշխատանքը:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10

2022թ. մայիսի 20-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուսումնական տարվա առկա բակալավրիատի և մագիստարատուրայի պետական ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
2. 2021-2022 ուսումնական տարվա 1-3-րդ կուրսերի առկա բակալավրիատ և 1-ին մագիստարատուրայի քննաշրջանի կազմակերպում:
3. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ - Մայիսի 18-19-ին կայացավ Օպերատորության և գեղավերստական լուսանկարչության բաժնի առկա բակալավրիատ 4-րդ կուրսի և մագիստրատուրայի 2-րդ կուրսի պետական ավարտական քննությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը,Օպերատորության և Գեղարվեստական լուսանկարչության բաժնի կուրսի ղեկավարներ՝ Արմեն Համբիկի Խաչատրյանը և Արմեն Ալբերտի Խաչատրյանը : Գեղարավեստական լուսանկարչության ավարտական կուրսի ուսանողները փայլուն ներկայացրեցին իրենց ավարտական աշխատանքերը և արժանացան պետական հանձնաժողովի նախագահի և անդամների խրախուսանքին:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը հանձնարարեց ամբիոնի դասախոսներին մինչև 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգարքների սկսվելը կատարել անհարաժեշտ առաջադրանքները, ինչպես նաև տեղադրել բոլոր նյութերը և հարցաշարերը23 classroom հարթակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի որակի պատասխանատու Կ. Մուրադյանը, դասախոսներ՝ Ս. Տրոյանը, Ա. Հարությունյանը, Լ. Գալստյանը և Շ. Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունված կարգով կատարել բոլոր հանձնարարականները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

3.ԼՍԵՑԻՆ- Ապրիլի 13-ին ք. Հրազդանի N13 ավագ դպրոցում Սամվել-Սնադա Գրիգորյանը կազմակերպեց ցուցահանդես բաց դաս: Միջոցառման ժամանակ ստորագրվեց համագործակցության հուշագիր:

Աբովյանի N10 ավագ դպրոցի աշակերտների հետ Սամվել- Սևադան կազմակերպեց հանդիպում և զրույց ունեցավ գեղարվեստական լուսանկարչության թեմայով:

Ապրիլի 26-ին Վանաձորի պետական պատկերասրահում ներկայացվեց Սամվել-Սևադայի անհատական ցուցահանդեսը:

Ապրիլի 26-ին կազմակերպվեց տարեվերջյան բաց դաս Օպերատորության և գեղարվեստական լուսանկարչության բակալավր 1-3 կուրսերի ուսանողների մասնակցությամբ, դասախոսներ՝ Ա. Հարությունյանի, Հ. Մանդունյանի, Ս. Տրոյանի, Մ. Վիրաբյանի, Շ. Վարդանյանի ղեկավարությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դասախոսներ՝ Ա. Արիստակեսյանը, Ն. Գայիջյանը, պրոֆեսոր Ա. Հ. Խաչատրյանը և Ա. Չիլինգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Նմանատիպ ուսուցողական միջոցառումներ, ցուցահանդեսներ և բաց դասեր կազմակերպել նաև հաջորդ 2022-2023 ուսումնական տարում:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

2022թ. հունիսի 30-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հերթական նիստը: Մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Յու. Երզինկյանի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատի պետական ավարտական քննությունների արդյունքների քննարկում ամփոփում:
2. 2021-2022 ուսումնական տարվա 1-4-րդ կուրսերի հեռակա բակալավրիատի ընթացիկ ստուգարքների կազմակերպում:
3. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ - Հունիսի 9-10-ին կայացավ Օպերատորության և գեղավերստական լուսանկարչության բաժնի հեռակա բակալավրիատ 5-րդ կուրսի պետական ավարտական քննությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը,Օպերատորության և Գեղարվեստական լուսանկարչության բաժնի կուրսի ղեկավարներ՝ Սամվել-Սնադա Գրիգորյանը և Ա. Հարությունյանը : Իրենց կարծիքը հայտնեցին նաև Կ. Բորյանը, Ա. Արիստակեսյանը, Շ. Թադևոսյանը, Լ. Գալստյանը: Օպերատորության և Գեղարավեստական լուսանկարչություն բաժնի ավարտական կուրսի ուսանողները ներկայացրեցին իրենց ավարտական աշխատանքերը:

2. ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը հանձնարարեց ամբիոնի դասախոսներին մինչև 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգարքների սկսվելը տեղադրել բոլոր նյութերը և հարցաշարերը classroom հարթակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի դասախոսներ՝ Կ. Բորյանը, Ն. Սարգսյանը, Ս. Տրոյանը, Ա. Հարությունյանը, Լ. Գալստյանը և Շ. Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունված կարգով կատարել բոլոր հանձնարարականները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1.ԼՍԵՑԻՆ- Հունիսի 11-ին նկարիչների միությունում տեղի ունեցավ 2021-2022 ուս. տարվա գեղարվեստական լուսանկարչության բաժնի շրջանավարտ Տիգրան Իսկանդերյանի անհատական ֆոտոցուցահադեսը :

2.ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի դասախոսական կազմը զեկույցով հանդես եկան 2021-2022 ուսումնական տարվա իրենց կատարած աշխատանքների հաշվետվությունը:

3.ԼՍԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ռ. Երզինկյանը ամփոփեց 2021-2022 ուսումնական տարվա դասախոսների կատարած աշխատանքները և համարեց բավարար:

ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ և

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ռ. ՅՈՒ. ԵՐԶԻՆԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ